


9272

ՀԱՄԱՅՈՒՆՈՒՄԻ (Բ) ԿԵՆՏԿՈՄԻ
ՎՈՐՈՇՈՒՄԸ
,ԻՍԿՐԱ“ ՅԵՎ „ՎՊԵՐՅՈՒ“
ԿՈԼՏԵՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԲԶԻԶՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ
ՍԱՍԻՆ



ԿՈՒՍՈՐԱՏ

1933

ՅԵՐԵՎԱՆ

09 DEC 2009

3X75

2-22

պր.

ՀԱՄԱՊԱՏՈՒՄԻ (Բ) ԿԵՆՏՐՈՆԻ 1933 թ. ՄԱՐՏԻ 23-Ի ՎՈՐՈՇՈՒՄԸ

ՍՈՒՆՑԵՎՍԿԻ ՇՐՋԱՆԻ (ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՍԵՎԱՀՈՂ ՄԱՐԶ) «ԻՍԿՐԱ» ԿՈՒՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՅԵՎ ՆՈՎՈ-ՄՈՍԿՈՎՍԿԻ ՇՐՋԱՆԻ (ԴՆԵՊՐՈՊԵՏՐՈՎՍԿԻ ՄԱՐԶ) «ՎՊԵՐՅՈՂ» ԿՈՒՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԿՈՒՍԲՈՂՋՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԱՍԻՆ — ԳԱՐՆԱՆԱՑԱՆԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Ծանոթանալով «Իսկրա» և «Վպերյոդ» կոլտնտեսությունների կուսակցական բջիջների աշխատանքին և լսելով այդ բջիջների քարտուղարների՝ ընկ. ընկ. Նեսվետայելի և Բուդյովի զեկույցումները, կենտկոմը նշում է. —

I

«ԻՍԿՐԱ» ԿՈՒՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԲԶԻՋՈՒՄ

Զնայած վոր «Իսկրա» կոլտնտեսությունը գոյություն ունի 1926 թվականից, սպասարկվում է ՄՏ կայանի կողմից, ունի 454 տնտեսություն, 2373 հեկտար վարելահող, 263 ձի, — բջիջը չի կարողացել կազմակերպչական — տնտեսական տեսակետից ամրապնդել կոլտնտեսությունը և դարձնել այն չրջանի առաջավոր, տնտեսապես զորեղ կոլտնտեսություններից մեկը: Ընդհակառակը, միջոցներ ձեռք չառնելով կոլտնտեսության կուլակային տարրերով խճողված լինելու դեմ պայքարելու ուղղությամբ, աչք փակելով կոլտնտեսության մեջ տեղի ունեցող անտնտեսավարության ու կուլակային բացահայտ փնասարարության փաստերի հանդեպ, բջիջը թույլ է տվել 1932 թ. բերքատվության պակասեցում, աշխուրի իջեցված վարձատրություն (աշխուրի մեկ և կես կիլոգրամ բնանյութի մասում, այնինչ չրջանում միջին նորման յեղել է յերկու և կես կիլոգրամ):

746 38

Տեխն. խմբ. Մ. Եփրեյ
Արագբեց Ա. Տեր-Մկրտչյան
Համեմված է արտադրության 29 մարտի 1933 թ.
Ստորագրված է տպագրելու 29 մարտի 1933 թ.
Տիրաժ 10000, Հրատ. № 98, 45-000 տպ. Բշ.

Պետերատի տպարան. Պատվեր 819. Պլավիտ 7731 (2)

Կենսական անթույլատրելի յե համարում այն, վոր բնիքը չի քննել և կոլտնտեսականների քննարկմանը չի առաջադրել կոլտնտեսություն վարչության գեկուցումը՝ անտեսական տարվա արդյունքների մասին, դարնանացանին նախապատրաստվելու կապակցությամբ չի քննել և կոլտնտեսականների քննարկմանը չի առաջադրել ձիու խնամքի, գյուղատնտեսական ինվենտարի վերանորոգման, մշտական բրիգադների կազմակերպման, անասունների աղբը դաշտ փոխադրելու և ցանքաչրջանառության հարցերը:

Բնիքը չի ապահովել ձիու նկատմամբ հոգատար խնամք ունենալու և ձիերին դարնանացանի աշխատանքներին նախապատրաստելու գործը, վորի հետևանքով ներկայումս կոլտնտեսության 263 գլուխ ձիերի 40 տոկոսը նվազ է, 8 տոկոսը հիվանդ է: Կան ձիերին ուժից վեր աշխատեցնելու դեպքեր: Կոլտնտեսության յերկու հարզ մանրացնող մեքենաները չեն ոգտադրվում, ընկած են կոլտնտեսության բակում՝ ձյունի տակ: Կերը գործածվում է առանց հսկողության: Կոլտնտեսականներին կեր քաց թողնելու ցուցակը կերը քաց թողնողը գործածել է իրեն ծխախոտի թուղթ: Ձիապանների կազմում մինչև վերջին ժամանակներս յեղել են յերեք կուլակներ: Գյուղատնտեսական ինվենտարը յիակատար կերպով վերանորոգված չէ, մաքրված չէ անցյալ տարվանից նրանց վրա մնացած ցեխը, յուղված չէ և թափված է քաց յերկնքի տակ՝ առանց հսկողության: Սերմացուն անփույթ է պահվում, ծաերի կեր է դառնում, կեղտոտվում է թոչունների ձերտով, անբացուն տեսակալորված չէ:

Բնիքի 13 անդամներից կուսակցական պարտականություն ունեն միայն հինգ հոգի (կուսխմբակի ղեկավարը, կինկազմակերպիչը, կոմյերիտմիության ամբացված ընկերը, անդամավճար դանձողը և կոչկակարների արհեստանոցի կուսկազմակերպիչը):

Բնիքի անդամներից և վոչ մեկը չունի արտադրության հետ կապված կուսակցական պարտականություն (բրիգադներին, ախտոին, վերանորոգման արհեստանոցին, սերմացվի ու կերի պահեստներին ամբացված լինելը): Բնիքի անդամները կտրված են բրիգադներից ու կոլտնտեսականներից, տեղեկություն չունեն կոլտնտեսության տնտեսական զբուլթյան մասին, այն մասին, թե ի՞նչ չափով և կոլտնտեսությունը նախապատրաստված դարնանա-

ցանին: Նույնիսկ բնիքի քարտուղար Նեսվետայնվը չգիտե, թե կոլտնտեսության մեջ վո՞րքան աշխատանքի ընդունակ մարդ կա, թե ի՞նչպես են կազմակերպված բրիգադները: Բնիքի մասնակցությունը կոլտնտեսության՝ դարնանացանին նախապատրաստվելու աշխատանքներում արտահայտվել է միմիայն բնիքի առանձին անդամներին սերմացվի դանձման աշխատանքի մեջ ներգրավելով:

Բնիքը մասնայական — քաղաքական աշխատանք չի ծավալել կոլտնտեսության մեջ, չի աշխատում կոլտնտեսական ակտիվ հայտաբերելու ու նրան կոփելու ուղղությամբ, կոլտնտեսական ակտիվի հետ և կոլտնտեսականների ժողովներում քննության չի առել կուսակցության ու կառավարության կարևորագույն վորոշումները՝ աշխատանքային կարգապահության համար պայքարելու, հանրային սոցիալիստական սեփականության պահպանման, բերքատվության բարձրացման մասին և այլն, չի կազմակերպում թեթիթերի կոլեկտիվ ընթերցումներ և զրույցներ կոլտնտեսականների հետ, չի կազմակերպում արտադրական խորհրդակցություններ, բրիգադներին ներսում չի ծավալել սոցիալիստական մրցումը:

Նշելով, վոր «Խիկրա» կոլտնտեսության բնիքը դեռևս յերեսը չուր չի տվել դեպի կոլտնտեսության արտադրական կյանքի հիմնական պրակտիկ հարցերը, վոր բնիքի ներկուսակցական կյանքը և հասարակական — քաղաքական աշխատանքը դեռևս չափազանց թույլ է, կենսական առաջարկում է —

1. Համկ(բ)Կ ԿԿ-ի և ԿՎՀ-ի հունվարյան սյենումի վորոշումների և ընդ. Ստալինի ցուցումների համաձայն աշխատելու և քաղաքացի բնիքի աշխատանքները, վորպեսզի կոլտնտեսության արտադրական կյանքի խնդիրները (մշտական բրիգադներ կազմակերպելը, բրիգադիրների, ողակավարների, հաշիեառների, վարանողների, ցանողների ու ձիապանների ընտրություն, աշխատանքի նորմայավորում ու վարձատրում, ձիերի խնամք, վարի, ցանքի, բերքահավաքի վորակը, աշխատանքային կարգապահություն և այլն) դառնան բնիքի աշխատանքի հիմնական բովանդակությունը, հիշելով, վոր «Կոլեկտիվ տնտեսության անցնելը վոչ թե նվազեցնում, այլ ավելացնում է մեր հոգատարությունը գյուղատնտեսության վերաբերմամբ, վոչ թե նվազեցնում, այլ մեծացնում է կոմունիստների ղեկավար դերը՝ գյուղատնտեսության բարձրացման գործում» (Ստալին):

2. Պարտավորեցնել յուրաքանչյուր կոմունիստի՝ ակտիվ կերպով մասնակցել կոլտնտեսութան մեջ արտադրական և մասնատրական — քաղաքական աշխատանքները ծավալելուն, կատարելով վորոշ կուսակցական պարտականութիւն, այնպես անէլ, վոր բջիջի յուրաքանչյուր անդամ՝ սկսած բջիջի քարտուղարից, բոլորոյն անդամներից և վերջացրած չարքային կոմունիստներով՝ կատարելով բջիջի վորոշումը և առանձին առաջադրանքները (սոցմբջման կադմակերպում, ձիու խնամք, դաշտային աշխատանք և այլն), աշխատանքի որինակ հանդիսանա, խորանա դործի բոլոր մանրամասնութիւններին մեջ, լինի մարտիկ-կադմակերպիչ, վորը համախմբում և կոլտնտեսութան շուրջն ակտիվին և կոլտնտեսական մասսաներին՝ ցանքի հաջողութեան և կոլտնտեսութեան տնտեսական ամրացման համար, կուշակի, լողբի, պոկոզի, ու դործալիքի դեմ մղվող պայքարում:

3. Կոլտնտեսութեան ներսում կոմունիստների ու կոմյերիտականների ուժերն այնպես դասավորել, վոր ապահովվի բջիջի կադմակերպող ազդեցութիւնն արտադրութեան վճռական բնագավառներում (ձիերի խնամք, վար, ցանք, աշխատանքի հաշվառում, կոլտնտեսական սեփականութեան պահպանում և այլն):

Բջիջի բյուրոն պետք է ամենորոյա ոգնութիւն ցույց տա բջիջի յուրաքանչյուր անդամին, մանավանդ կուսակցութեան թեկնածուներին՝ իրենց կուսակցական պարտավորութիւններն ու բջիջի առաջադրանքները կատարելու ասպարիզում, սխտեմատիկաբար ստուգելով նրանց աշխատանքը: Նա պետք է կանոնավոր կերպով հրավիրի ընդհանուր ժողովներ, այդ ժողովներում քննութեան առնելով կոլտնտեսութեան արտադրական հարցերը, կոմունիստների հաշվառութիւններն՝ իրենց կատարած աշխատանքի մասին, ապահովելով բայլչեիկյան կոլեկտիվի դաստիարակիչ ազդեցութիւնը բջիջի յուրաքանչյուր անդամի նկատմամբ:

4. Առաջարկել բջիջին՝ մաքրել կոլտնտեսութիւնը կուլակային տարրերից, հենվելով կոլտնտեսական ակտիվի ու կոլաբնտեսականների վողջ մասսայի վրա:

II

«ՎԱԵՐԵՅՈՒ» ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԲՋԻՋՈՒՄ

«Վալերյոյ» կոլտնտեսութիւնը, վորն ունի 233 տնտեսութիւն և 1836 հեկտար ցանք, անցյալ տարի համարյա յերկու անգամ ավելացրել է իր ընդհանուր յեկամուտը, աշխորի արժեքը 52 կոպեկից հասցրել է 1 ու 43 կոպեկի, ունի կաթնապրանքային ֆերմա, վոշխարարուծական ֆերմա, խողարուծական ֆերմա: Կոլտնտեսութիւնն անցյալ տարի վաճառել է իր անդամներին 106 հատ խոզի ձագ, 16 յերինջ, 30 հորթ: Կոլտնտեսութիւնը կատարել է հացամթերման և մսամթերման պլանները, գլուխ է բերել աշնանացանը, կատարել է աշնանավարը 50 տոկոսով, լիակատար կերպով ապահոված է սերմացվով:

Կոլտնտեսութեան կուսբջիջը՝ դարնանայանին նախապատրաստվելու կապակցութեամբ՝ բջիջի բյուրոյում և բջիջի ընդհանում ժողովներում քննութեան է առել սերմացվի զանձման, քաշող ուժի նախապատրաստման և ինվենտարի վերանորոգման հարցերն ու կոլտնտեսութեան արտադրական պլանը: Կոլտնտեսութեան մեջ կադմակերպված են մշտական դաշտավարական բրիգադներ, յուրաքանչյուր բրիգադին ամրացված են հողամասեր, քաշող ուժ, լծասարք: Կադմակերպված է ձիու խնամքը (ամեն ուր մաքրում են ձիերին, մաքրում են նրանց սմրակները, չիւում աչքերը, կադմակերպված է պայքարը պարագիտների դեմ, բարելավված է առանաբուժական հսկողութիւնը):

Չնմանվելով «Խսկրա» կոլտնտեսութեան բջիջին, կոլտնտեսութեան արտադրական կյանքի հարցերի վրա կենտրոնանալով, «Վալերյոյ» կոլտնտեսութեան բջիջը միաժամանակ թույլ է տալիս այն սխալը, վոր կոլտնտեսութեան ղեկավարութիւնն իրագործվում է միայն կոլտնտեսութեան վարչութեան ու գլուղիտորհրդի աշխատողների մի փոքրաթիւ խմբի միջոցով: Բջիջը կոլտնտեսական մասսաներին բավարար չափով մոբիլիզացիայի չի յենթարկում իր և կոլտնտեսութեան վարչութեան կողմից կիրառվող ձեռնարկումների շուրջը, չի ապահովում կոլտնտեսականների ակտիվ մասնակցութիւնը ցանքի նախապատրաստութեան աշխատանքներին: Կոլտնտեսութեան արտադրական պլանը և ցանքի ստուգիչ թվերը բջիջի կողմից թույլ են մասսայականացված ու

քացատրված բրիգադներում: Բերքատվության բարձրացման կոնկրետ խնդիրները, արտադրանքի և աշխատանքի զնահատման նորմաները կոլտնտեսականների կողմից յուրացված չեն: ԽՍՀ Միության Կենտրոնական յերրորդ նստաշրջանի կարևորագույն վորոշումներից մեկը՝ դործալքումների ու աշխատանքային կարգապահության խախտումների դեմ պայքարելու միջոցառումների մասին ընդունված վորոշումը հայտնի չե կոլտնտեսականներին: Կոլտնտեսականների տարեկան հաշվետու ժողովն անգամ (18. II) բլիժի կողմից չի ոգտագործվել ցանքի նախապատրաստության ասպարիզում կոլտնտեսականների ակտիվությունը բարձրացնելու համար, կոլտնտեսականների մեջ նախնական աշխատանք չի տարվել, վորի հետևանքով վարչության գեկուցումն անցել է առանց քննարկման: Բլիժի կողմից այդ ժողովում չեն դրվել աշխատանքային կարգապահության հարցերը, լողերը չեն մերկացվել, լավագույն հարվածային-ակտիվիստները չեն խրախուսվել:

Բլիժը և կոլտնտեսության վարչությունը հարկ չեղած պայքար չեն ծավալել հանրային սեփականության պահպանման ուղղությամբ: Կոլտնտեսության մեջ կարտոֆիլի թագրած հոր հայտարեկու ժամանակ բլիժն ու կոլտնտեսության վարչությունը րավականացան միայն հայտարեկում կարտոֆիլը հաշվի առնելով, առանց այդ փաստը հետադոտելու և հանցավորներին պատասխանատվության յենթարկելու: Կոլտնտեսության մեջ զողություն կատարող պահեստապետ Կովալ Դեմյանիկ, դրպանում կուստում ունեցող այդ ժուլիկին՝ նորից թողել են իր աշխատանքում՝ իրրե պահեստապետ՝ և յերկրորդ անգամ հանցագործություն կատարելուց հետո յեն միայն դատի տվել:

Գարնանացանի նախապատրաստության մի շարք կարևորագույն խնդիրների նկատմամբ բլիժը չի կարողացել ապահովել իր ամենորյա ոպերատիվ գեկավարությունը, բլիժը չի խորանում դործի մանրուքների, բորր մանրամասնությունների մեջ, սկսած դործը չի հասցնում մինչև վերջ: Բարելավելով ձիերի խնամքը, բլիժը չի կարողացել ապահովել անասունների կերի պարտադիր կերպով կոտորելու և թրջելու դործը: գլուխ բերելով բրիգադներում ողակներ կազմակերպելու աշխատանքը, բլիժը չի ստուգել ողակների կազմը, ուժերի դասավորությունը նրանց ներսում, չի ապահովել ողակավարների համապատասխան ընտրությունը:

Բլիժի անդամների զգալի մասը, վորոնք վարչական-տնտեսական պաշտոններ են վարում (յերկու պահեստապետ, խանութի վարիչ, անասնարուժ-սանիտար, տնտեսավար, Փերմայի վարիչ և այլն) ներդրված չեն ցանքի նախապատրաստության ուղղությամբ կատարվող կազմակերպչական - մասսայական աշխատանքներում: Բրիգադներին ամրացված բլիժի անդամները (Կովալ Զախարի, Կասյաչենկո Պոլիկարպ, Գարկովենկո Անտոն և ուրիշներ) կուսակցական աշխատանք չեն կատարում և բլիժի կողմից հանձնարարված կոնկրետ առաջադրանքներ չունեն: Բրիգադներին ամրացված ընկերներից վումանք վերջին ամսվա ընթացքում և վո՛չ մի անգամ չեն յեղել բրիգադներում:

Բլիժը կոմունիստների ու կոմյերիտականների, ակտիվիստների, հարվածայինների ու կին պատգամավորների ուժերի ճիշտ դասավորման միջոցով իրեն համար հենարան չի կազմակերպում բրիգադներում, աշխատանք չի կատարում կոլտնտեսական ակտիվի համախմբման ու դաստիարակման ուղղությամբ: Չնայած վոր կոլտնտեսությունն ունի իր ակտիվը՝ 42 հին կոլտնտեսականներից և հարվածայիններից («Վպերյոդ» կոլտնտեսությունը գոյություն ունի 1928 թվականից), սակայն բլիժը նրանց լավ չի ճանաչում, նրանց մեջ աշխատանք չի կատարում, նրանց չի ներգրավում բլիժի ընդհանուր դւրաց ժողովներին, չի կարողանում նրանց ոգտագործել աշխատանքային կարգապահության, հանրային սեփականության պահպանության համար մղվող պայքարում:

Բլիժի՝ իր ակտիվիստներին չճանաչելու ցայտուն որինակ կարող է հանդիսանալ թեկուզ այն փաստը, վոր կոլտնտեսության կողմից Դենեպրոպետրովսկի մարզի հարվածային կոլտնտեսականների մարդային համագումարի պատգամավոր և ուղարկվում մի կոլտնտեսական, վորն, ինչպես պարզվեց, ուռճացած, կեղծ հարվածային, հակակոլտնտեսական տրամադրություն ունեցող մեկն է յեղել:

Նշելով, վոր բլիժը նվաճումների և իր աշխատանքի դրական արգյունքների կողքին ունի նաև լուրջ թերություններ, կուսակցության ԿԿ-ն առաջարկում է. —

1. Կոլտնտեսությունը դեկավարելու և նրան՝ գարնանացանի հաջող անցկացմանը նախապատրաստելու իր աշխատանքներում բլիժը պետք է գլխավոր չեշտը դնի կոլտնտեսականների մասսա-

ներին արտադրութեան կոնկրետ խնդիրներին շուրջը կադմակերպելու և կոլտնտեսական ակտիվի ու կանանց մեջ կատարվող ամենօրյա աշխատանքներին վրա, այնպես մի քանի յուրաքանչյուր բրիգադում լինի լավագույն կոլտնտեսականներից, կոլտնտեսուհիներից ու հարվածայիններից կադմակերպման արտադրական կորիզ՝ իրեն բնիշի հենարանը՝ կոլտնտեսութեան մեջ մեծամասնութեան համար մղվող պայքարում:

«Բայժեիկները ուժը, կոմունիստների ուժը նրանումն է կայանում, մի քանի կարողանում են մեր կուսակցութեանը շրջապատել անկուսակցական ակտիվի միլիոններով» (Ստալին): «Վսեբյոդ» կոլտնտեսութեան բնիշի կոմունիստները պետք է սովորեն աշխատեն:

2. Այդ խնդրին համապատասխան՝ բնիշը պետք է վերակառուցի կուսակցական աշխատանքները, մոտեցնելով ղեկավարութեանն արտադրական ստորին ողակին՝ բրիգադին և դրան համարապատասխան դասավորել կոմունիստներին, կոմյերիտականներին և ակտիվիստ-կոլտնտեսականներին ուժերն արտադրութեան մեջ, ապահովելով սխտեմատիկ ողնութեան և ամենօրյա ղեկավարութեան յուրաքանչյուր կոմունիստի նկատմամբ, դաստիարակելով ու աճեցնելով նրան պրակտիկ աշխատանքներում, բարձրացնելով նրա դասակարգային գիտատեսութեանը: Հատուկ ուշադրութեան պետք է նվիրվի հետ մնացող կոմունիստներին. աշխատողներին պետք է ամրացնել բնիշի ավելի զարգացած անդամներին՝ նրանց ողնութեան ցույց տալու, նրանց կոլտնտեսութեան ակտիվ կուսակցական քաղաքական ու անտեսական կյանքում ներգրավելու և նրանց դադարաւարական-քաղաքական մակարդակը բարձրացնելու համար:

III

Կենտկոմը նախադրուշացնում է Նովո-Մոսկովսկի և Սոլնցեւսկի շրջկոմներին, Կիւչենսկի և Սոլնցեւսկի ՄՏ կայանների քաղաքաժիններին՝ մի քանի բնիշների աշխատանքի վերակառուցումը՝ Համ. Կ (բ) Կ ԿԿ-ի և ԿՎՀ-ի հունվարյան պերամի վորոշումների և բնի. Ստալինի ցուցումների համապատասխան՝ պահանջում է շրջկոմներից ու ՄՏ կայանների քաղաքաժիններից՝ բարելավել իրենց ղեկավարութեանը բնիշներին նկատ-

մամբ, բնիշների հետ կենդանի կապ ունենալու և կոլտնտեսական կյանքի բոլոր մանրամասնութեաններն իսկապես իմանալու հիման վրա՝ մշտական ողնութեան ցույց տալ բնիշներին՝ նրանց աշխատանքներում:

Շրջկոմները և քաղաքաժինները պետք է կարողանան յուրաքանչյուր կոմունիստի, յուրաքանչյուր կոմյերիտականի և յուրաքանչյուր կոլտնտեսական ակտիվիստի բայժեիկորեն մոբիլիզացիայի յենթարկել հարվածայնութեան նոր վերելք առաջ բերելու և կոլտնտեսական մասսաներին դարձնանալու հաջողութեան համար մղվող պայքարին ակտիվ կերպով մասնակից դարձնելու համար:

IV

Կենտկոմը հատկապես ընդգծում է, մի քանի ինչպես քաղաքացիական կոլիւնների շրջանում առանձին կոմունիստների ու բնիշներին աշխատանքը ռադամաւարտում դնահատում էր ռադամաւարտի մարտական կարգապահութեան վիճակով, ինչպես գործարանային բնիշի աշխատանքը դնահատում է արեֆինալանների կատարմամբ, այնպես էլ կոլտնտեսական բնիշների աշխատանքը՝ հատկապես առաջիկա դրաման կապակցութեամբ՝ Կենտկոմը կդնահատի նախած այն բանին, թե բնիշն ամբողջութեամբ և յուրաքանչյուր կոմունիստ առանձին վերցրած մի քանի կկարողանան տիրապետել կոլտնտեսութեան արտադրութեանը, աշխատանքի կադմակերպման, աշխատանքի նորմայաւորման ու դնահատման հարցերին, թե ինչպես են նրանք պայքարում կոլտնտեսութեաններում աշխատանքային կարգապահութեան հաստատելու համար, ցանքի հաջող անցկացման համար, ինչպես են կատարում կոլտնտեսութեան պարտավորութեանները պրոկտորական պետութեան հանդեպ, թե ինչպես է կոլտնտեսական մասսան կադմակերպում աշխատողներին կենսագործման շուրջը:

Այդ կապակցութեամբ կոլտնտեսական բնիշները պետք է. —

1. Վերջացնեն դարձանալու նախադրատաւութեան ամբողջ աշխատանքը, սերմացվի դանձումը, ցանքի ամբողջ ժամանակաշրջանի համար կերի ֆոնդեր ստեղծելը, բրիգադների բաշխումը, բրիգադները հողամասերին ամրացնելը, ցանքաշրջանա-

ռության դաշտեր վորոշելը: ԲՆԻՆԵՐԸ պետք է աշխատանքն այնպես կազմակերպեն, վոր յուրաքանչյուր կոլտնտեսական ու կոլտնտեսուհի դեռ մինչև ցանքն սկսելը հաստատապես գիտենա իր տեղը և աշխատանքը բրիգադում, արտադրանքի նորմաները, իր կատարած աշխատանքի քանակատույն աշխուրհում, վորպեսզի բրիգադի յուրաքանչյուր ողակում անձատար աշխատանքներում (վար անողներ, ցանողներ) նշանակվեն ակտիվ, ստուգված կոլտնտեսական հարվածայիններ, վորպեսզի կոլտնտեսություններում, բրիգադներում տեղի չունենա սերմացվի դողություն, վորպեսզի ցանքի նորմաները խիստ կերպով պահպանվեն, վորպեսզի աշխատանքի հաշվառումն ու կատարված աշխատանքի ընդունումը դառնան աշխատանքի վորակը բարձրացնելու, աշխատանքային կարգապահությունն ու ժեղացնելու համար պայքարելու խիստական միջոց՝ ընդդեմ լուրջության, պոկոդականության ու ճրիակներության:

2. ԲՆԻՆԵՐԸ պետք է կոնկրետ ձեռնարկումներ նշեն դարձանաացանի ընթացքում դաշտում կատարվելիք մասսայական-քաղաքական աշխատանքների ասպարիզում (դաշտում, բոլոր կոմունիստներին ու կոմյունիստականներին մասսայական աշխատանքներում ներգրավելը, նրանց ձիւտ դասավորումն ըստ բրիգադների, ուսուցչության ներգրավումը, սոցմրցման կազմակերպումը հարվածային բրիգադների միջև, կարմիր և սև տախտակներ, դաշտային պատի թերթերի հրատարակումը, թերթերի կոլեկտիվ ընթերցանություն, զրույցներ, արտադրական խորհրդակցություններ և այլն): Յուրաքանչյուր ուրիշ աշխատանքի արդյունքները պետք է լայն կերպով քննության առնվեն բրիգադներում, աշխատանքների ընթացքում հայտարարված թերությունները տեղն ու տեղն ուղղելու և աշխատանքի վորակը բարձրացնելու համար:

3. Կենտկոմը հատկապես ընդդեմ է, վոր դարձանաացանի հաջողությունը և կոլտնտեսությունների կազմակերպչական ու տնտեսական ամրացումն անհնար են, առանց Կենտկոմի ու ԿՎՀ-ի հունվարյան պլենումի կողմից դյուղական կուսակցական կազմակերպությունների առաջ դրված հիմնական խնդիրների կենսագործման:

Ամենից ավելի կայուն, կուսակցությանը նվիրված կոմունիստներից ու կոմյունիստականներից կոմիտե կուսակցական-կոմյունիստական բայլչեկյան կորիզ, համախմբել այդ բայլչեկյան վո-

րիզի չուրջն անկուսակցական ակտիվ՝ կուլակության դեմ մղվող պայքարում ստուգված լավագույն կոլտնտեսականները, դուրս վոնդել կոլտնտեսություններից բոլոր հակահասարակական վնասարար տարրերին և նվաճել կոլտնտեսականների մեծամասնությունը: «Կոլտնտեսությունները... կարող են տնտեսական շինարարության հրաշքներ ցույց տալ, յեթե նրանց գլուխը կանգնած են իսկական հեղափոխականներ, բայլչեկյան, կոմունիստներ» (Ստալին):

«ԴՐԱՎԴԱՆ» ԿԵՆՏԿՈՄԻ ՎՈՐՈՇՄԱՆ ՄԼՍԻՆ

Մենք ներկայումս գտնվում ենք Միության վճռական դյուղատնտեսական շրջաններում ցանքը մասսայորին սկսելու նախորդակին: ՀամԿ(Բ)Կ ԿԿ-ի վորոշումը՝ Սոնցեկսկի շրջանի «Իսկրա» կոլտնտեսության (Կենտրոնական Սևահող մարզ) և Նովո-Մոսկովսկի շրջանի «Վսերյոդ» կոլտնտեսության (Գնեսպրոպետ-րովսկի մարզ) կուսակցական բՆԻՆԵՐԻ աշխատանքի մասին՝ դարձանաացանին նախապատրաստվելու կապակցությամբ, հսկայական քաղաքական նշանակություն ունի:

Այս վորոշումը ցույց է տալիս, թե վորքան ձիւտ ու ժամանակին են ընկ. Ստալինի ցուցումները՝ կոլտնտեսական շինարարության ասպարիզում կոմունիստների ունեցած պատասխանատվության և ինքնահոսի կործանարար լինելու մասին:

«... Կոլեկտիվ տնտեսության՝ վորպես տնտեսության գերակշռող ձևին անցնելը չի նվազեցնում, այլ ավելացնում է մեր հողատարությունը դյուղատնտեսության բնագավառում, չի նվազեցնում, այլ մեծացնում է կոմունիստների ղեկավար գերը դյուղատնտեսության բարձրացման գործում: Ինքնահոսն այժմ՝ ավելի քան յերբեք՝ վտանգավոր է դյուղատնտեսության դարձացման համար: Ինքնահոսն այժմ կարող է խորտակել վոլլ գործը» (Ստալին):

Արդյո՞ք բոլոր շրջանային ու մարզային կուսակցական կազմակերպությունները, արդյո՞ք բոլոր բՆԻՆԵՐԻ ու կոմունիստները յուրաքանչյուր են այդ, արդյո՞ք նրանք բոլորը վերակառուցել են իրենց աշխատանքները՝ ԿԿ-ի ու ԿՎՀ-ի հունվարյան պլենումի վորոշումների և կուսակցության առաջնորդ ընկ. Ստալինի ցու-

ցումներին համապատասխան ձևով: Դեռևս վոչ: Այդ և ցույց տալիս «Իսկրա» կոլտնտեսությունից բնիկի որինակը, վորն ամենևին չի մտահոգվել սերժացվի, ձիու խնամքի, դուրդատնտեսական ինվենտարի վերանորոգման հարցերով, չի քննել և կոլտնտեսականները ընդհանուր ժողովի քննությունը չի առաջադրել կոլտնտեսություն վարչության գեկուցումը՝ տնտեսական տարվա արդյունքները մասին: Մի՞թե կարելի չե լուրջ կերպով խոսել այն մասին, վոր բնիկը շատ թե քիչ բավարար կերպով դրադվել և կոլտնտեսական արտադրություն հարցերով այն ժամանակ, յերբ բնիկի տասներեք անդամներից և վոչ մեկը վորևե աշխատանք չի կատարում արտադրական բրիգադներում, յերբ նրանցից և վոչ մեկը չունի արտադրության հետ կապված կուսակցական պարտականություն: Մի՞թե կարելի չե խոսել այդ բնիկի կոմունիստների ղեկավար դերի մասին այն ժամանակ, յերբ բնիկի անդամները կարված են բրիգադներից ու կոլտնտեսականներից, յերբ բնիկի քարտուղարը չգիտե անդամ, թե վո՞րքան աշխատունակ մարդ կա կոլտնտեսությունում, թե ի՞նչպես են կազմակերպված բրիգադները: Կրկին ու կրկին անգամ մեր առաջ կանգնում և կոլտնտեսական բնիկների նկատմամբ կոնկրետ, կենդանի ղեկավարություն ունենալու հարցը: Կենտրոնական կոմիտեյի նախագահությանցումը Նովո - Մոսկովսկի և Սոլնցևսկի շրջկոմներին պետք և հաշվի առնեն բոլոր կուսակցական կազմակերպությունները:

Շրջանային ու մարզային կուսակցական կազմակերպություններից շատե՞րն արդյոք կարող են հպարտանալ նրանով, վոր իրենք ընդհուպ մոտեցել են կոլտնտեսական բնիկների ղեկավարման գործին, վոր նրանք կոլտնտեսական կյանքի բոլոր մանրամասնություններն իսկապես խմանալու հիման վրա մշտական ոգնություն են ցույց տալիս կոլտնտեսական բնիկներին: Դժբախտաբար դեռևս այդպիսի բան չկա: Իբրև կանոն, տեղական ու շրջանային ղեկավար կազմակերպություններն ընդհանուր խնդիրներով դրադվելով, ընդհուպ չեն մոտենում կոլտնտեսական բնիկներին կյանքին. այդ աշխատանքը վստահում են յերրորդական աշխատողներին: Այստեղից ել բղխում և այդպիսի ղեկավարություն վորակը. այստեղից ել բղխում և ղեկավարման դրասեյա-կային-բյուրոկրատական մեթոդի գերակշռությունը: Կենտրոնական կոմիտեն իր այս վորոշմամբ դուրդատնտեսություն կոնկրետ,

կենդանի ղեկավարման մի փայլուն որինակ և ցույց տալիս կուսակցական կազմակերպություններին, նա ցույց և տալիս, թե ի՞նչպես բնիկների ղեկավարությունը մոտեցնել կոլտնտեսական արտադրությունը, ի՞նչպես բարձրացնել կոմունիստների պատասխանատվությունն ու ղեկավար դերը կոլտնտեսական շինարարության գործում, ցանքի նախապատրաստման ու անցկացման ասպարիզում:

Կենտրոնական կոմիտեն ցույց և տալիս, թե ի՞նչպես հասնել այն բանին, վոր բնիկն ամբողջությամբ և յուրաքանչյուր կոմունիստ առանձին վերցրած դիտենան, թե ի՞նչ և կատարվում կոլտնտեսության մեջ, բրիգադում, թափանցեն կոլտնտեսական կյանքի բոլոր մանրամասնությունների մեջ, կարողանան ղեկավարել մասսաներին, պատասխանատու դառն իրենց կոլտնտեսություն վիճակի, ցանքի հաջողության համար:

«... Ինչպես քաղաքացիական կոմիտեյի շրջանում բնիկների ու առանձին կոմունիստների աշխատանքը ռազմաճակատում դնահատվում եր ռազմաճակատի մարտական կարգապահության վիճակով, ինչպես գործարանային բնիկի աշխատանքը քնահատվում և արդժեքի տրամադրելու կատարվում, այնպես ել կոլտնտեսական բնիկների աշխատանքը՝ հատկապես առաջիկա դրաման կապակցությամբ՝ Կենտկոմի կողմից կոնահատվի նայած այն բանին, թե բնիկն ամբողջությամբ և յուրաքանչյուր կոմունիստ առանձին վերցրած ի՞նչպես կկարողանան տիրապետել կոլտնտեսության արտադրությանը, աշխատանքի կազմակերպման, աշխատանքի նորմայավորման ու դնահատման հարցերին, թե ի՞նչպես են նրանք պայքարում կոլտնտեսության մեջ աշխատանքային կարգապահություն հաստատելու համար, ցանքը հաջող անցկացնելու համար, ի՞նչպես են կատարվում կոլտնտեսության պարտավորությունները պրոլետարական պետության հանդեպ, այդ խնդիրների կատարման շուրջն ի՞նչպես են կազմակերպվում կոլտնտեսական մասսաները», — ասված և յերկու կոլտնտեսական բնիկների աշխատանքի մասին ԿԿ-ի ընդունած վորոշման մեջ:

Վո՞րն և ներկայումս դարձանալի որինակելի ձևով անցկացնելու հիմնական ողակը, ինչի՞ վրա պետք և կենտրոնացվել կուսակցական բնիկներն ղլխավոր ուղղությունը:

Դարձանալի նախապատրաստության այսպիսի խնդիրներին կողքին, ինչպիսիք են սերմացուն, արակոտորների վերանորոգում

մը, ձերքի գարնանացանի աշխատանքներն նախատրամադրել և աշխատանքներն հիմնական խնդիրը կոտնտեսութեան աշխատանքների ճիշտ կազմակերպումն է, մշտական բրիգադներն ամբողջումն է՝ լողերի, պոկողների, ձրիակերների, ծուլերի գեմանհատ պայքար մղելու հիման վրա, հարվածախուժությունն ու սոցմրցումը ծավալելու հիման վրա:

Բրիգադի աշխատանքն ամրացնելու անհրաժեշտ պայմանն է՝ ճիշտ բաշխել կոտնտեսականներին զանազան աշխատանքներում, բարեխղճորեն հաշվառման յենթարկել նրանց աշխատանքը և ճիշտ գնահատել:

Յեթե ցանքի սկզբին ամեն մի կոտնտեսական ճշտով չիմանա իր արտադրական առաջադրանքը, չիմանա, թե վորտեղ, վորքան մասնակցում նա պետք է հերկի, ցանի ու ցաքանի, չիմանա արտադրանքի նորմաները, գնահատումները, չիմանա, թե ում հետ է մրցելու և այլն, ապա նախապես կարելի չի դուշակել, վոր աշխատի բրիգադում գարնանացանը կվիժի:

Կոտնտեսական բջիջների աշխատանքի դրսևվոր թերութունները, ինչպես շնչով և Կենտկոմի վորոշման մեջ, այն է, վոր շատ բջիջներ գեռես շրջադարձ չեն կատարել գեպի կոտնտեսութեան արտադրական կյանքի գործնական հարցերը, իրենց ամբողջ աշխատանքը գեռ չեն փոխադրել կոտնտեսական բրիգադի մեջ, վորը հանդիսանում է ցանքի նախապատրաստման հիմնական ուղակը, վորը վճռում է ցանքի հաջողութունը: Բրիգադի կուսակցական ղեկավարութունը կոտնտեսական բջիջների մեծ մասում գեռ անբավարար է կազմակերպված: Կենտկոմի վորոշման մեջ մատնանչված է, վոր բոլոր բջիջները պետք է «վերահսկուցեն իրենց աշխատանքը, ձգտելով մոտեցնել ղեկավարութունը ստորին արտադրական ողակին՝ բրիգադին և դրան համապատասխան բաշխեն արտադրութեան մեջ կոմունիստներին, կոմյերիտականներին ու ակտիվ կոտնտեսականներին, սխտեմատիկ ուղեութուն և սովորյա ղեկավարութուն ապահովին յուրաքանչյուր կոմունիստի աշխատանքի նկատմամբ, դաստիարակելով ու զարգացնելով նրան գործնական աշխատանքում, բարձրացնելով նրա դասակարգային զգաստութունը»:

Կոտնտեսական բջիջների աշխատանքի մեծ բացն այն է, վոր նրանք թույլ են աշխատում կոտնտեսական ակտիվը համախմբել:

Եւ ու դաստիարակելու համար, հանձն ակտիվ՝ բրիգադներում ամուր հենարան ստեղծելու համար. չդիտեն, չեն ուսուսանալ կոտնտեսական արտադրութեան առաջավորներին՝ բուն հարվածայիններին: Կուլակտիվ տնտեսութեան ղեկավարութունը և ցանքի նախապատրաստումն իրականացվում է աշխատողների նեղ շրջանակի միջոցով, վորոնք հաճախ կտրված են մասսաներից, չդիտեն, թե ինչ է կատարվում բրիգադներում, ողակներում, վորոնք հաշվի չեն առնում կոտնտեսականների արտադրութունները: Կուլակութեան և կուլակային սարտածի դեմ մղվող պայքարում բջիջներից շատերը չդիտեն շեքտավորված մոտեցում ցուցաբերել կոտնտեսական մասնային: Նրանք չեն տարբերում ակտիվ աշխատավոր կոտնտեսականին լողերից ու դոփողից, չդիտեն առաջ քաշել հին կոտնտեսական կադրերին, մոռանում են նախկին կարմիր պարտիզաններին, դրացրված կարմիր բանակայիններին:

Մասնային աշխատի ընդհանուր մոտեցում ցուցաբերելու, իրեն ակտիվից մեկուսացնելու հետևանքն է լինում կուլակի դիրքերի ուժեղացումը: Մասնային աշխատի մեքենայական, վոր բայլիկյան մոտեցում ցուցաբերելու դեպքում հնարավոր չե նախճել կոտնտեսութուններում մեծամասնութուն, հնարավոր չե հիմնովին ջախջախել կուլակութունը, ամրացնել կոտնտեսութունը:

Կոտնտեսութուններում ակտիվ կերտել, կուսակցութեան շուրջը կոտնտեսականների մասսաներին համախմբել կարելի չե միմիայն անողոք պայքար մղելով կուլակութեան դեմ, մերկացնելով և կոտնտեսութուններից դուրս վնդեղով վնասարար ու հակահասարակական տարրերին, պայքար մղելով լողերի ու դոփողների դեմ: Կոտնտեսական մասսաների և ակտիվի համախմբումը պետք է կատարվի կոտնտեսական արտադրութեան կոնկրետ հարցերում, այն պայքարում, վորը մղվում է կարգապահութունն ու աշխատանքի արտադրողականութունը բարձրացնելու համար, կոտնտեսական սեփականութունը պահպանելու համար:

Կենտկոմի ու ԿՎՀ-ի հուլիսի պլենումը մատնանչեց պուլում կատարվող քաղաքական աշխատանքի թույլ լինելը և անհրաժեշտ համարեց ՄՏԿ-ներին ու խորհրդակցութուններին կից ստեղծել քաղաքական բաժիններ: Պլենումը խնդիր դրեց՝ «վճար

746 38



բարձր բարելավել կոլտնտեսությունների ու խորհրդանշանությունների բնական զարգացման ու տնտեսական աշխատանքը», վերապես գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման ճանապարհով ալեկի հաղթական առաջ գնալու կարևորագույն պայմանը: Կենտկոմի ներկա վորոշումը ցույց է տալիս կուսակցական կազմակերպություններին, թե ինչպես պետք է կոնկրետ կերպով ղեկավարել կոլտնտեսական բնիկների աշխատանքը:

Անհրաժեշտ է լայն քննարկել Կենտկոմի այդ վորոշումը ՄՏԿ-ների ու կոլտնտեսությունների բոլոր բնիկներում: Այն յերկու բնիկների փորձով, վորոնց մասին խոսված է վորոշման մեջ, նրանց թերություններով ու սխալներով սովորելու յեն գյուղի կուսակցական բոլոր կազմակերպությունները:

Վոչ մի տարակույս չի կարող լինել, վոր Կենտկոմի այդ վորոշումը կարողացավ ու կբացատրի ամբողջ ստորին մասում: Կոմունիստները և կոմյերիտականները, գլխավորելով հարվածային կոլտնտեսականների նախաձեռնությունը, կատեղծեն այնպիսի պայմաններ, վոր առաջավոր կոլտնտեսություններն արդեն ընթացիկ կամպանիայում ցույց կտան տնտեսական շինարարության հրաշքներ:

Գարնանացանը կատարվելու յե դասակարգային ամենասուր պայքարի պայմաններում: Կուլակություն մնացորդները նորից կփորկեն դաբոտած կազմակերպել ցանքի դեմ, քայքայել կոլտնտեսական արտադրությունը: Կոլտնտեսական արտադրության յնագլխավորում յուրաքանչյուր կոմունիստի ու կոմյերիտականի պատասխանատվության և նրանց հեղափոխական զգաստության բարձրացումը, նրանց ղեկավար դերը վորպես առաջավոր կազմակերպիչ մարտիկների, վորոնք համախմբում են ակտիվն ու կոլտնտեսական մասնակցներին՝ կուլակի, լոգրի, գոփողի ու գործալիքի դեմ մղվող պայքարում, վորոշելու յեն գարնանացանի հաջողությունը:

Կոմունիստները և կոմյերիտականները, անցե՛ք այն մարտիկների առաջին շարքերը, վորոնք պայքարում են ցանքը որինակելի կատարելու համար:

Ձեռք բերե՛ք վճռական հաջողություններ, ցույց տվե՛ք կուլտնտեսությունների տնտեսական ու քաղաքական ամրացման հրաշքներ: (Վարկային մարտի 25-ի առաջնորդող հեռագրով ՄՀԳ, արտասոված «Խորհրդային Հայաստան» մարտի 27-ի համարից):

«ԻՍԿՐԱ» ՅԵՎ «ՎՊԵՐՅՈՂ» ԿՈՒՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՒՍԲԶԻՋՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ: ՀԱՄ. Կ. (Բ) Կ. ԿԿ-Ի ԿԱՅԱՍՏՐԱՄՎՈՐՈՇՄԱՆ ՌԻՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ՀԿ (Բ) Կ ԿԿ-Ի ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅԱՆ ՎՈՐՈՇՈՒՄԸ

Հսկայական քաղաքական նշանակություն տալով «Իսկրա» և «Վպերյոդ» կոլտնտեսությունների կուսակցական բնիկների աշխատանքների մասին Համ Կ (Բ) Կ ԿԿ-ի կայացրած վորոշմանը, ՀԿ (Բ) Կ ԿԿ վորոշում է.—

1. Առաջիկա կուսորում բոլոր կոլտնտեսական, գյուղական և խորհրդանշանային բնիկներում՝ գյուղի կոլտնտեսական աշխատավորական լայն մասնակցության մասնակցությունը, մանրագին ուսումնասիրման յենթարկել Համ Կ (Բ) Կ ԿԿ-ի վորոշումը՝ «Իսկրա» և «Վպերյոդ» կոլտնտեսությունների բնիկների աշխատանքի մասին, կապելով այն յուրաքանչյուր բնիկի կոնկրետ յեղիքների հետ՝ առաջին հերթին դաշնանացանի կամպանիայի նախապատրաստության ու անցկացման ասպարիզում:

2. Առաջարկել բոլոր շրջկոմներին՝ մանրամասն կերպով նախապատրաստել կուսորը՝ այդ հարցի վերաբերյալ, նախապես, մինչ բնիկի ժողովը, ուսումնասիրելով այն վողջ ստորին կուսցանցում և բոլոր բնիկներն ապահովել վորակյալ ղեկուցողներով՝ նախապես ծանոթացնելով նրանց յուրաքանչյուր բնիկի կոնկրետ աշխատանքների հետ:

Կուսակցության շրջկոմներին՝ յ մի բերել կուսորվա արդյունքները՝ այդ հարցի մշակման վերաբերյալ և կոնկրետ ձեռնարկումներ նշել «Իսկրա» և «Վպերյոդ» կոլտնտեսությունների բնիկների աշխատանքի վերաբերյալ Համ Կ (Բ) Կ ԿԿ-ի կայացրած վորոշմանը համապատասխան ձևով բնիկների աշխատանքները վերակառուցելու և բարելավելու ուղղությամբ:

3. Առաջարկել բոլոր շրջկոմներին՝ սխտեմատիկաբար լսել

գյուղական բջիջների և ստորին կուս-ողակների ղեկավարները, նախապես ուսումնասիրելով նրանց աշխատանքը՝ Համ Կ (բ) Կ ԿԿ-ի վերջին կենսադործման տեսանկյունով:

4. Սոաջարկել կենտրոնական և շրջանային վտղ մամուլին՝ մասսայականացնել Համ Կ (բ) Կ ԿԿ-ի վերջումը հիշյալ բջիջների մասին և այդ տեսանկյունով լուսաբանել կուսակցական բջիջների աշխատանքը՝ այդ վերջին կենսադործման ուղղութեամբ:

5. Առաջարկել Կուսհրատին՝ հինգ որվա ընթացքում առանձին բրոշյուրով, հայերեն և թուրքերեն լեզուներով, հրատարակել Համ Կ (բ) Կ ԿԿ-ի վերջումը «Իսկրա» և «Վպերյոդ» կոլտն-տեսութեանների բջիջների աշխատանքի մասին և այդ վերջումը նվերված՝ «Պրավդա»-յի առաջնորդողը:

6. Առաջարկել Կոոպերատիւն՝ ապահովել մինչև ապրիլի 5-ը՝ այդ բրոշյուրը յուրաքանչյուր գյուղական բջիջին հասցնելու գործը:

ՀԿ(բ)Կ ԿԿ-ի քարտուղար՝

ԽԱՆՁՅԱՆ

ԳԻՆԸ 20 ԿՈՊ.

Постановление ЦК ВКП(б)
от 22 марта 1933 г.

О работе ячеек колхоза
«Искра» и колхоза «Вперед».

Издательство ЦК КП (б) А
Партиздат 1933 Эривань